ՏԱՐՈՆԻ ԱՌԱՎՈՏԸ

(Հատված պոեմայից)

Կարմիր արևն առավոտյան
Պայծառ ցոլաց դեպի Մուշ,
Ծավալվեցավ ծովի նման
Մշու դաշտը քաղցրահուշ։

Նրա շուրջը խոշոր դեմքով
Կանգնած, լեռներն ահագին,
Քնաթաթախ, լուռ աղոթքով,
Նայում են վեր – երկնքին։

Արածանին օձապտույտ
Ծաղկադալար ափերում,
Մշուշի մեջ, ազատ, անփույթ
Խաղ է անում, փրփըրում։

Բայց հարսներ չեն հավերժական
Խայտաճամուկ շորերով,
Եվ չեն եկել, որ լողանան
Արածանու ջրերով։

Որ սիզավետ տափաստանում
Վազվըզելով մանրաքայլ,
Երգ ասելով քաղ են անում
Մարգերի մեջ ցողափայլ։

Արեգակի շողերի հետ
Ահա շողաց և մի բան,–
«Ո՞վ զորավոր սուրբ Կարապետ,
Ո՞վ ավազանդ հայության...»

Հանգիստ կացի՛ր, բարեպաշտ մարդ,
Այն խաչը չէ քո պաշտելի
Սուրբ Կարապետ շքեղազարդ
Հայոց վանքի գմբեթի։

Ծայրն է քրդի սուր նիզակի,
Որ ճոճում է մշուշում.
Ահա և ձին ավազակի,–
Ինչ արագ է նա քըշում։

Տեսավ հեռվից քաջ աշիրը
Զվարթ խումբը քաղվորի,
Եվ ցոլացին սուր աչքերը
Յանկությունից վայրենի.

Եվ սլացավ ինչպես բազեն
Խոյանում է ամպերից,
Ա՜հ, խեղճ կանայք, էլ ո՞ւր վազեն,
Ինչ է գալիս ձեռքներից...

Հասավ, ճանկեց... բռնեց թարքին
Օրիորդին ուշաբարձ,
Ասպանդակեց, տաքացավ ձին,
Եվ հեռացավ սրընթաց։